Երևան քաղաքի թիվ 20 դպրոցի 7-րդ դասարանի աշակերտների հետ անցկացրած ֆրանսերեն մեկ դասի նկարագրություն

ուսուցչուհի՝ Էլեն Հայրապետյան
աշակերտների ազգությունը՝ հայեր
տարիքը՝ 12 տ., 7-րդ դասարան
դասի թեման՝ ածականների տեղը ֆրանսերեն և անգլերեն լեզուներում
դասի տևողությունը՝ 45 րոպե

Դասի նպատակը – Իմանալ,որ գոյություն ունեն տարբեր լեզուներ, որ լեզուները՝ տվյալ դեպքում ֆրանսերենը և անգլերենը ունեն քերականական նմանություններ ու տարբերություններ : K6
Իմանալ, որ յուրաքանչյուր լեզու, տվյալ դեպքում անգլերենը և ֆրանսերենը, ունեն իրենց յուրահատուկ քերականական համակարգը ; K6.1
Իմանալ, որ մայրենի լեզուն՝ հայերենը ևս մեկ համակարգ է, ինպես մնացած բոլոր լեզուները : K6.1.1
Իմանալ, որ յուրաքանչյուր լեզու ունի իր առանձնահատուկ միջոցները՝ իրականությունը ընկալելու և արտահայտելու համար : K6.2
Իմանալ, որ լեզվի քերականական կարգերը՝ օրինակ թիվ, սեռ, պարտադիր չէ, որ հանդիպեն յուրաքնչյուր լեզվում : K6.3
Իմանալ, որ եթե նույնիսկ այդ քերականական կարգերը կան նաև այլ լեզուներում, ապա պարտադիր չէ, որ դրանց կազմությունը նույնը լինի :

Դասը բաղկացած էր երեք հիմնական մասից:
Առաջին հատվածում աշակերտները ներկայացրին թե ինչ գիտեն ածականի մասին, որտեղ է ածականի տեղը հայերեն, անգլերեն, ֆրանսերեն լեզուներում, թվարկեցին ֆրանսերեն լեզվով ածականներ և նշեցին երեք լեզուներ նմանությունները և տարբերություններ :
Դասի երկրորդ հատվածում աշակերտներին առաջարկվեց երեք առաջադրանք ֆրանսերեն, անգլերեն լեզուներում ածականների տեղի վերաբերյալ :
Առաջին և երկրորդ առաջադրանքի նպատակն էր. կարդալ միևնույն տեքստը ֆրանսերեն այնուհետև անգլերեն լեզուներով, և դուրս բերել նմանությունները և տարբերություններ:
Երրորդ առաջադրանքի նպատակն էր ամրապնդել սովորողների շարահյուսական գիտելիքները : Առաջարկվեց վարժություն խառը բառերով, որի պահանջն էր բառերը դասավորել ճիշտ շարահյուսությամբ՝ ուշադրություն դարձնելով ածականի տեղին :

Դասի երրորդ հատվածում իրականացվեց դասի ամփոփում. աշակերտները ներկայացրին,թե ինչ յուրացրին տվյալ դասից, և յուրացրած նյութը օգտագործեցին բանավոր խոսքում՝ կազմելով երկխոսություններ ֆրանսերեն լեզվով :

Դասի ընթացքը բավական հագեցած էր, աշակերտները հետաքրքրված էին թեմայով և ակտիվ մասնակցություն էին ցուցաբերում :

Ներկայացնում ենք դասից մեկ հատված՝ դասի երկրորդ մասը, երբ աշակերտներին առաջարկվեց երեք առաջադրանք ֆրանսերեն և անգլերեն լեզուներում ածականների տեղի վերաբերյալ: